

վախճանեցաւ: Ազգն զՅակոբ Ա. Նալեան Պատրիարք ընտրեց (15 Փետր. 1741), տէրութեան Տրովարտակը տրուեցաւ, եւ Յակոբ Ա. Մեծ Եպարքոսին առջեւ Պատրիարքական Ինքնահագաւ, որուն ներկայ գտնուեցան Սարգիս Ա. եւ Սեղբոս Իշխանը: Յետոյ Սարգիս Յակոբ Պատրիարքին մատոյց իր Տրաժարականը Գաղատիոյ աթոռէն, զոր Պատրիարքը շատ ընդգիմանալէն ետեւ ստիպուեցաւ ընդունիլ:

Սարգիս Արքեպ. երբ 1740ին Գաղատիայէն Պոլիս եկաւ՝ իրեն Աթոռակալ թողած էր Մովսէս Ա. Պիպէռճեանը: Նոյն օրերը Գաղատիա երկու միսիոնար եկած էին, մին Կարնեցի քերովբէ Աարդապետ, իսկ միւսը «փաթէրա» մը, որոնք Ս. Քառասունք եկեղեցին իջեւանեցան, քարոզներ տուին եւ դարձեալ մեկնեցան: Ասոնց թէեւ Աթոռակալը չհակառակեցաւ, բայց ժողովրդեան մէջ խռովութիւն ինկաւ, եւ չորս եկեղեցիք կաթողիկեայ ձեռքն անցան: Ոչ-կաթողիկեայք Աթոռակալին խոստացան որ զինք Առաջնորդ անուանել պիտի տան, եւ այսպէս կառավարութեան ձեռք չորս եկեղեցիներուն դարձեալ տիրացան: Տէր Սուքիաս Պոլիս գնաց դարման գտնելու, իրեն հետեւեցան Պահատուր Պետրոս Ա. եւ Սիմոն Եպիսկոպոս: Ասոնք գաղղիական դեսպանին միջնորդութեամբ յաջողեցան Տրովարտակ հանել՝ Մովսէս Ա. ին Էտիրնէ արքորման, որ սակայն ճամբայ չեւած մեռաւ. իսկ Գաղատիոյ փաշան գահընկէց ընել տուին. եւ Ամէտճի էֆէնտիին